

## ԿԱՆՈՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ

Որ գանարատ բազուկս քն ի խաչին տարածեցեր Քրիստոս Աստուած, եւ նշան յաղթութեան ետուր մեզ. սովաւ գկեանս մեր պահեա: Որ գաշխարհակեցոյց բազկատարածութիւն խաչի քն Քրիստոս Աստուած գաւազան գորութեան ետուր մեզ, սովաւ գկեանս մեր պահեա: Որ գմեռեալն ի ճաշակմանէ փայտին յանցանաց, կենաց փայտիւրն կենագործեցեր, սովաւ գկեանս մեր պահեա:

Սուրբ խաչն օգնական հաւատացելոց, կանգնեցաւ ի յերկրի յաղթող Քշնամուռն. եկայք ժողովուրդք երկրպագեացուք: Արարիչն Աստուած բարձրացաւ ի խաչին, եւ գմեռեալս մեղօք փայտին ճաշակմամբն, ի սմա նորագեալ կենդանացոյց: Ի միւսանգամ գալստեան աստուածորդւոյն, սուրբ խաչն երեւի եւ լուսաւորէ. գի նա է յոյս հաւատացելոց:

Յաղթող եւ գնոր օրհնութիւն միշտ ի բարձունս երգեսցուք քազաւորին Քրիստոսի հաւատացեալ ժողովուրդք: Որ եկն ի լուսաւորել գրնորեալ սուրբ գեկեղեցի. եւ պսակեաց սուրբ խաչին նմա գփառս երգեսցուք: Այսօր եւ մեք տօնեսցուք գնաւակատիս սուրբ խաչին. եւ փրկողին մատուցուք փառք եւ պատիւ յաւիտեան:

Խաչի քն Քրիստոս երկիրպագանեմք. եւ գքազումն քն մեծացուցանեմք. եւ գաւոր յարութիւնդ քն փառաւորեմք. եկայք հաւատացեալք երկիրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մեյուղ. վասնգի եկն ի ձեռն խաչին իւրոյ շնորհեաց պարգեւս աշխարհի: